



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



## Հավելված 1

### Ուսումնասիրության մեթոդաբանությունը <sup>1</sup>

Ուսումնասիրությունը պետք է իրականացվի գործողությունների (քայլերի) հետևյալ հաջորդականությամբ՝ Արմավիրի տարածաշրջանում 2017 նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված հարցման օրինակով.

- 1) Տարածաշրջանի համայնքների ղեկավարներին հեռախոսային հարցման հարցաշարի տրամադրում (մշակված հարցաշարը կտրամադրվի հաղթող կազմակերպություններին)
- 2) Հեռախոսային հարցումների անցկացում
- 3) Հեռախոսային հարցումներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն,
- 4) Համայնքների խոշորացման փնջերի նախագծերի կազմում՝ համայնքի ղեկավարներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա,
- 5) Տարածաշրջանում հանրային քննարկման անցկացման համար հարցաշարի տրամադրում,
- 6) Հանրային քննարկման կազմակերպում և անցկացում՝ տարածաշրջանի համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- 7) Հանրային քննարկման ընթացքում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն,
- 8) Տարածաշրջանի համայնքների խոշորացման փնջերի նախագծերի կազմում՝ հանրային կարծիքի տեղեկատվության վերլուծության հիման վրա:

### Ուսումնասիրության իրականացումը

#### Քայլ 1. Տարածաշրջանի համայնքների ղեկավարներին հեռախոսային հարցման հարցաշարի մշակում

Ուսումնասիրության հարցաշարը ([Հավելված 1](#)) մշակվել է ՀաՄաՏեղ ծրագրի համընկերության կազմակերպությունների փորձագետների կողմից: Հարցաշարը մշակելիս ՀաՄաՏեղ ծրագրի փորձագիտական թիմի խնդիրն է եղել համայնքների ղեկավարների միջոցով բացահայտել՝ համայնքներում ի՞նչ ծառայություններ են

<sup>1</sup>Տեքստում նշված հավելվածները կտրամադրվեն հաղթող ճանաչված կազմակերպություններին

մատուցվում, դրանցից որոնցի՞ց են օգտվում հարևան համայնքները, ո՞ր համայնքների հետ են համայնքների ղեկավարները տեսնում իրենց համայնքների միավորումը, ո՞րն է միավորվող համայնքների օպտիմալ թիվը մեկ փնջում և ո՞ր համայնքը կարող է լինել նոր ձևավորվող համայնքի կենտրոն: Հարցաշարը կազմելիս կարևոր տեղ է հատկացվել նաև համայնքների խոշորացման գործընթացից համայնքների ղեկավարների ակնկալիքների բացահայտմանը և հիմնական մտավախությունների վեր հանմանը: Հարցաշարն ընդհանուր թվով բաղկացած է 9 հարցից:

## **Քայլ 2. Հեռախոսային հարցումների անցկացում**

Հեռախոսային հարցման համար նախատեսված հարցաշարի հիման վրա խոշորացման ենթակա բոլոր բնակավայրերում անհրաժեշտ է անցկացնել<sup>2</sup> հեռախոսային հարցումներ:

Հարցազրուցավարները համայնքների ղեկավարներից պետք է հավաքագրեն հարցաշարով նախատեսված հարցերի պատասխանները՝ որպես հարցումների արդյունքային տեղեկատվություն:

## **Քայլ 3. Հեռախոսային հարցումներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն**

Հեռախոսային հարցումների արդյունքում ստացված տեղեկատվությունը անհրաժեշտ է խմբավորել ըստ առանձին համայնքների, որից հետո, ամփոփելով տեղեկատվությունը, պետք է իրականացնել դրա վերլուծությունը: Վերլուծության ընթացքում համադրվելու են առանձին համայնքների ղեկավարներից ստացված տեղեկատվությունը համայնքների խոշորացման փնջեր կազմելու նկատառումով՝ հիմք ընդունելով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքով<sup>3</sup> սահմանված համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները և «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգում»<sup>4</sup> ամրագրված չափորոշիչները:

Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի»<sup>5</sup> «միավորվել կարող են միևնույն մարզի ընդհանուր վարչական սահման ունեցող համայնքները: Ըստ հայեցակարգի չափորոշիչների՝ համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրը միացվող համայնքների նկատմամբ պետք է ունենա կենտրոնական դիրք, ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից չպետք է գերազանցի 20 կմ-ը, պետք է առկա լինեն ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն/ակումբ) և միջնակարգ դպրոց, համայնքի բնակավայրերի միջև

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, [http://www.armstat.am/file/Map/MARZ\\_04.pdf](http://www.armstat.am/file/Map/MARZ_04.pdf)

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-18, Հոդված 5.2, 07.11.1995թ.:

<sup>4</sup> «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության № 44 արձանագրային որոշում, 10.11.2011թ.:

<sup>5</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, Հոդված 5.1, կետ 4

հասարակական տրանսպորտային հաղորդակցություն ապահովող ճանապարհների (առնվազն խճապատ) առկայություն և այլն: Մի խոսքով, հարցումներից ստացված տեղեկատվության վերլուծության ընթացքում հնարավորինս ապահովվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները և չափորոշիչները:

**Քայլ 4. Համայնքների խոշորացման փնջերի նախագծերի կազմում՝ համայնքի ղեկավարներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա**

Իրականացված վերլուծության հիման վրա կազմվելու են համայնքների խոշորացման փնջերի նախագծերը ([Հավելված 5](#)):

**Քայլ 5. Տարածաշրջանում հանրային քննարկման անցկացման համար հարցաշարի մշակում**

Հանրային քննարկման համար նախատեսված հարցաշարը մշակվել է հատուկ ձևաչափով և մեթոդաբանությամբ, որի հիմնական նպատակն է եղել հնարավորինս ամբողջական տեղեկություններ հավաքել հանրային քննարկման մասնակիցներից խոշորացման սպասվող գործընթացի վերաբերյալ: Հարցաշարը ներկայացված է [Հավելված 2](#)-ում:

**Քայլ 6. Հանրային քննարկման կազմակերպում և անցկացում՝ տարածաշրջանի համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ**

Այս փուլով իրականացվելու է համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ հանրային քննարկման (Town hall) կազմակերպումը և անցկացումը:<sup>6</sup>

Արմավիրի ղեպքում հանրային քննարկմանը հրավիրվել էին տարածաշրջանի 37 համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների, բնակիչների ակտիվ խմբերի ներկայացուցիչներ: Միջոցառմանը մասնակցել էին 26 համայնքից 92 ներկայացուցիչ: Մասնակիցները բաժանվել էին 9 խմբի, որոնցից 7-ում ներկայացված էին 10-ական, իսկ 2 խմբում՝ 11-ական մասնակից: Յուրաքանչյուր խմբում ծրագրի կազմակերպիչների կողմից ընդգրկվել էին երկու մասնակից, որոնք չէին հանդիսանում Արմավիրի տարածաշրջանի որևէ համայնքի բնակիչ: Նրանցից մեկը վարում էր ու համակարգում էր քննարկման ընթացքը, իսկ մյուսը կատարում էր համապատասխան նշումներ:

Ձեր տարածաշրջանում հրավիրվածների թիվը կարող է այլ լինել՝ կախված խոշորացման ենթակա համայնքների թվից:

Հանրային քննարկման մասնակիցների ընդգրկումը խմբերում պետք է իրականացնել պատահականության սկզբունքով, սակայն կազմակերպիչների կողմից

<sup>6</sup> Chapter guide to organizing, planning and executing a Town Hall meeting, <https://www.acep.org/uploadedFiles/ACEP/advocacy/state/Guide%20to%20Hosting%20a%20Town%20Hall%20Meeting.pdf>

անհրաժեշտ է ապահովել մեկ խմբում նույն համայնքից առավելագույնը 1 կամ 2 ներկայացուցչի մասնակցությունը, ինչը հնարավորություն կտա խուսափելու նույն համայնքի ներկայացուցիչների՝ իրար խանգարելու կամ քննարկման վրա բացասական ազդեցություն ունենալու խնդրից:

Մասնակցային քննարկումը իրականացվելու է երկու փուլով.

- Մասնակիցների խմբերին ներկայացվելու է փորձագիտական խմբի կողմից մշակված հարցաշարը ([Հավելված 2](#)): Մասնակիցների յուրաքանչյուր խումբ առանձին կանդիդատնա հարցաշարում նշված հարցերին, իսկ հարցերի պատասխաններն անմիջապես կհավաքագրվեն և կտեղադրվեն մեկ միասնական էլեկտրոնային հարթակում՝ արտացոլելով մեծ էկրանի վրա:
- Մասնակիցներին կներկայացվեն համայնքների ղեկավարների հեռախոսային հարցումների արդյունքում մշակված համայնքների խոշորացման փնջերի նախագծերը: Մասնակիցները, ծանոթանալով ներկայացված փնջային լուծումներին, կառաջարկեն համայնքների փնջերի ձևավորման կամ ձևափոխման այլընտրանքային տարբերակներ, որոնք ևս կարձանագրվեն կազմակերպիչների կողմից:

#### **Քայլ 7. Հանրային քննարկման ընթացքում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն**

Մասնակցային քննարկման արդյունքում ստացված տեղեկատվությունը կմշակվի նույն մեթոդաբանությամբ, ինչ հեռախոսային հարցումների արդյունքները: Այն համայնքները, որոնց ներկայացուցիչները չեն մասնակցի հանրային քննարկմանը, կբաշխվեն համայնքների փնջերում՝ ելնելով հարևան կամ այլ համայնքերի ներկայացուցիչների հնչեցրած կարծիքներից և համայնքների ղեկավարների հեռախոսային հարցումների հիման վրա մշակված փնջերի նախագծերի՝ քննարկումների ժամանակ արտահայտված կարծիքներից:

#### **Քայլ 8. Տարածաշրջանի համայնքների խոշորացման փնջերի նախագծերի կազմում՝ հանրային կարծիքի տեղեկատվության վերլուծության հիման վրա**

Կազմվելու են տարածաշրջանի համայնքների խոշորացման փնջերի նախագծերը՝ հիմնվելով հանրային քննարկման արդյունքում հավաքագրված և վերլուծված տեղեկատվության վրա ([Հավելված 6](#)):